

ԵՂԱՆԱԿԱԿՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆ
ԱՆԵԿՂՈՏԻ ԺԱՆՐՈՒՄ

Ամեկդուտը հեքիաթի, լեգենդի, առասպելի, համելուկի, առակի, աֆորիզմի և այլ ժանրերի հետ միասին բանահյուսության ժանրերից մեկը է, որն առանձնանում է իր ոճական պատկանելությամբ: Համաձայն Ուիքիպեդիա հանրագիտարանի՝ անեկդուտը փոքր պատմվածք է կենսագրական հետաքրքիր, զվարճալի միջադեպի մասին: Սովորաբար այն հիմնված է կյանքի այնպիսի փաստի վրա, որն ընդգրկում է իրական անձինք կամ վայրեր [14, 108]: Ամեկդուտն անիրական իրական դեպք է: Դա զարմանահրաշ ժանր է, որի գոյությունը դարերի պատմությունն ունի: Այն կարճ շարադրանք է, անձնական փորձի պատմություն [15; 120]: Լեզվաբանները տարբեր մոտեցումներ են առաջարկում այս ժանրի նկատմամբ. Ե. Կուռզանովը անեկդուտը համարում է ոչ թե հումորի, այլ ճարտասանության յուրահատուկ ժանր: Մինչդեռ այնպիսի լեզվաբաններ, ինչպիսիք են Մ. Կազանը, Ս. Շիշկովը, Վ. Սորոկինան, Վ. Խիմիկը, Ա. և Ե. Շմելյովները, Գ. Պոչեպցովը, Ա. ՌոյՖեն, անեկդուտը դիտում են որպես «ծիծաղի մշակույթի» յուրահատուկ երևույթ, որի անպայման բաղադրիչն է հումորը [2; 4; 6; 8; 9; 10; 11; 12]:

Յուրաքանչյուր ազգ ունի իր անեկդուտը՝ իրեն բնորոշ կերպարներով, ազգային հումորով: Մ. Տվենի բնութագրմամբ՝ պատմությունների շատ տեսակներ կան, բայց ընդամենը մեկ դժվար տիպ՝ հումորայինը: Հումորային պատմությունը աներիկյան է, կոմիկական պատմությունը՝ անգլիական, սրամիտը՝ ֆրանսիական [13]: Հետևաբար կարելի է ասել, որ ֆրանսիական անեկդուտն առանձնանում է սրամտությամբ և նրբանկատությամբ, գերմանականը՝ որոշ ծանրակշռությամբ, անգլիականը՝ երբեմն բարեհոգի, երբեմն թեթև քմիծաղով, ամերիկյանը՝ սրամտությամբ և ծաղրով: Իսկ ռուսական ազգային հումորն առանձնանում է բովանդակության խորությամբ և նշանակության ու ձևերի բազմազանությամբ [6]: Նշենք սակայն, որ, անկախ իրենց ազգային պատկանելությունից, այս ժանրի տեքստերը հետապնդում են նույն նպատակը, այն է՝ մարդկանց կենսակերպի, քննարկվող երևույթի, որևէ կոնկրետ բնագավառում տիրող մոլորության քննադատությունը, որն արտահայտվում է ենթատեքստում՝ ծաղրի, հեգնանքի ձևով:

Հետևաբար, սույն հոդվածի շրջանակներում մեր կողմից առանձնապես կարևորվում է այս ժանրի տեքստերում եղանակավորման կարգի դրսևորումը,

որով արտահայտվում է տվյալ ժողովրդի, այդ թվում նաև պատմողի վերաբերմունքը տարբեր հարցերի և երևույթների նկատմամբ: Եղանակավորումն իրենից ներկայացնում է խոսողի/գրողի վերաբերմունքը իրականության նկատմամբ: Իսկ անեկդոտը ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովրդի վերաբերմունքի արտահայտությունն իրականության, կյանքի, հասարակության, ընդհանրապես աշխարհի նկատմամբ: Եղանակավորումը հիմնականում համոզիսանում է խոսքի կարգ, հետևաբար անեկդոտի համար, որն առաջնահերթ բանավոր տեքստ է, այն ունի մեծ կարևորություն: Հարկ է նշել, որ անեկդոտի ժանրի կարևոր առանձնահատկություն է դրա բանավոր բնույթը, որը շատերի հետ միասին ընդգծում է Ե. Կուռզանովը անեկդոտի, առակի և հեքիաթի նմանություններն ու տարբերությունները քննարկելիս: Եթե առակը և հեքիաթը դուրս են եկել բանավոր ժանրից, ապա անեկդոտը, ընդգրկվելով գրավոր տեքստերի մեջ, շարունակում է մնալ բանավոր: Այն պահպանում է իր ժանրային պատկանելությունը և արդյունքում մնում կենտրոնական բանավոր խոսակցական ժանր: Անեկդոտը չի կորցրել այն զգացումը, թե որտեղ և ում հետ գործ ունի, մինչդեռ առակը զգալիորեն հեռացել է իր նախնական էությունից [4]:

Այն փաստը, որ անեկդոտը պատկանում է բանավոր խոսքին, չափազանց կարևոր է: Շատ դեպքերում ոչ թե դրա բովանդակությունը, այլ պատմողի հնչերանգը, միմիկան, շարժումներն են ստեղծում անեկդոտի «աղը»:

Այսպիսով, բանավոր խոսքի այս յուրատեսակ ժանրի տեքստերում եղանակավորումը իրացվում է տարբեր միջոցներով՝ ձևաբերականական, բառային, դարձվածքային, շարահյուսական, հնչերանգային, կառուցվածքային, ոճական: Սրանցից առանձնանում է հնչեռանգայինը. անեկդոտում առկա ողջ հումորը, ծաղրը, հեգնանքը հաղորդվում է հատուկ հնչերանգի միջոցով. այս պատճառով էլ գրավոր տեքստերը երբեմն չեն հասնում իրենց նպատակին: Նույն բանը կարելի է ասել տարբեր հնչերանգներով և արտահայտել միանգամայն տարբեր վերաբերմունք ասույթի նկատմամբ: Սրանով է նաև պայմանավորված այն փաստը, որ անեկդոտում երբեմն առավել կարևոր է ինչպես ասելը, քան ինչ ասելը: Այսինքն՝ եղանակավորման կարգն անեկդոտում օգնում է արտահայտել ժանրային այնպիսի յուրահատկություն, ինչպիսին է ճարտասանական բնույթը:

Անեկդոտում, եղանակավորման իրացման ձևերից մեկն է չափազանցությունը. երբեմն իրականության նկատմամբ մարդու ունեցած վերաբերմունքը հնարավորինս տեսանելի և հստակ արտահայտելու համար հարկ լինում դիմել որոշ չափազանցման: Հետաքրքրականն այն է, որ հենց չափազանցությունն է բացում մարդկանց աչքերը, ստիպում նրանց տեսնել իրականությունը,

ընդունել, որ ամեն ինչ այնպես չէ, ինչպես թվում է և երևում է: Բերենք մեկ օրինակ՝

The Materialistic Lawyer

A lawyer opened the door of his BMW, when suddenly a car came along and hit the door, ripping it off completely. When the police arrived at the scene, the lawyer was complaining bitterly about the damage to his precious BMW. "Officer, look what they have done to my Beeeeeeemer," he whined.

"You lawyers are so materialistic, you make me sick," retorted the officer. "You're so worried about your stupid BMW, that you didn't even notice that your left arm was ripped off."

"Oh my God" replied the lawyer, finally noticing the bloody left shoulder where his arm once was. "Where's my Rolex?!"

Այս օրինակում չափազանցվում է իրավաբանի նյութապաշտությունը: Չափազանցության միջոցով է, որ պատմողը հաղորդում է իր և ողջ ժողովրդի ունեցած հեզմական վերաբերմունքը այս մասնագիտության տեր անձանց նկատմամբ:

Ամեկոտի ժանրում պատմողի վերաբերմունքի արտահայտման հիմնալի միջոց է հանդիսանում նաև հեզմանքը՝ որպես լեզվաարտահայտչական միջոց, մանավանդ, որ այս ժանրում եղանակավորման կարգի առկայությունը առաջին հերթին ենթադրում է ժողովրդի քննադատական, ծաղրալից և հեզմական վերաբերմունքի արտահայտում: Դիտարկենք հետևյալ տեքստը.

WASHINGTON (Reuters) – A tragic fire on Monday destroyed the personal library of President George W. Bush. Both of his books have been lost. Presidential spokesman Ari Fleischer said the President was devastated, as he had not finished coloring the second one.

Չունորը "book" բառի համատեքստային իմաստի մեջ է, քանի որ "book" բառի տակ պատմողը նկատի ունի նկարչական գիրք կամ ալբոմ: Այստեղ հեզմանքի միջոցով, պատմողը բացահայտ ծաղրում է այս քաղաքական գործչին՝ ասելով, որ նրա ամբողջ գրադարանը բաղկացած է երկու գրքից:

Եղանակավորման կարգի արտահայտման կարևոր միջոցներից է նաև ծայնարկությունը: Դարձյալ ելնելով ամեկոտի բանավոր բնույթից՝ կարելի է ասել, որ ծայնարկությունները առկա են գրեթե բոլոր ամեկոտներում, որոնցից առավել հաճախ հանդիպում են "oh", "well", "of course", "ah", "ok":

Դիտարկենք հետևյալ ամեկոտը.

Two elderly ladies meet at the launderette after not seeing one another for some time. After inquiring about each other's health, one asked how the other's husband was doing.

"Oh! Ted died last week. He went out to the garden to dig up a cabbage for dinner, had a heart attack and dropped down dead right there in the middle of the vegetable patch!"

"Oh, dear! I'm very sorry," replied her friend, "What did you do?"

"Opened a pan of peas instead."

Երկու տարբեր հերոսների կողմից արտաբերված միևնույն ծայնարկությունը ենթադրում է տարբեր հնչերանգներ, հետևաբար՝ նաև տարբեր վերաբերմունք քննարկվող հարցի նկատմամբ: Գրավոր տեքստում բացականչություններն օգնում են հաղորդել նաև ասույթի հատուկ հնչերանգը:

Վերցնենք մեկ այլ օրինակ.

The secret of a long and happy marriage

I met a man who had been married for 66 years. "Amazing. 66 years!" I said.

"What's the secret to such a long, happy marriage?"

"Well," he replied, "It's like this. The man makes all the big decisions... and the woman makes just little decisions."

"Really?" I responded. "Does that really work?"

"Oh, yes," he said proudly. "66 years, and so far, not one big decision!"

"Well", "really?", "oh, yes" բացականչություններն օգնում են հաղորդելու բանավոր խոսքի ավանդույթները և պատմողի վերաբերմունքը:

Ընդհանրապես տարբերում են սուբյեկտիվ եղանակավորում և օբյեկտիվ եղանակավորում, այսինքն՝ հեղինակի վերաբերմունքը հաղորդման նկատմամբ և հաղորդման ու իրականության հարաբերությունը:

Վ.Գաբրիելյանը եղանակավորման կարգի ուսումնասիրությանը մվիրված աշխատությունում տարբերում է օբյեկտիվ և սուբյեկտիվ եղանակավորում՝ նշելով, որ օբյեկտիվ եղանակավորումը համարվում է մեկն այն հիմնական կարգերից, որոնք ստորոգում ունեցած շարահյուսական միավոր են կազմում: Մինչդեռ, համաձայն հեղինակի, սուբյեկտիվ եղանակավորումը արտահայտում է խոսողի վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ և ասույթի այնպիսի հատկանիշ է, որի գոյությունը պարտադիր չէ: Սուբյեկտիվ եղանակավորման իմաստային հիմքը ներառում է ոչ միայն հաղորդվածի տրամաբանական գնահատականը, այլև զգայական արտացոլումը [1, 6-7]:

Անեկդոտում եղանակավորման սուբյեկտիվ տեսակը ներակայորեն է արտահայտված: Պատմողը իր ասույթը հաղորդում է հնարավորինս չեզոք տոնով, որը նպաստում է կատակերգական տպավորության ստեղծմանը: Պատմողը ցույց է տալիս, որ իր խոսքը պարտադիր կերպով չի հաղորդում իր սեփական տեսակետը, մոտեցումը, այլ արտահայտում է տվյալ խնդրի նկատմամբ ողջ ժողովրդի ունեցած վերաբերմունքը, իսկ ինքն ավելի շուտ միջնորդ է հանդիսանում: Սակայն, եթե նա տվյալ պահին պատմելու համար ընտրել է տվյալ անեկդոտը, ուրեմն, բնականաբար, կիսում է դրանում արտահայտված սուբյեկտիվ եղանակային նշանակությունը, պարզապես դա անում է ինիշխյալոց, որը բխում է անեկդոտի ժանրային յուրահատկություններից:

Ըստ Օ.Ա. Դոնսկովոյի՝ նպատակահարմար է ոչ թե հակադրել օբյեկտիվ եղանակավորումը սուբյեկտիվին, այլ տեքստի եղանակավորումը համարել ի սկզբանե սուբյեկտիվորեն որոշված և առանձնացնել օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները տեքստի եղանակավորման կարգի ներսում [3, 14]:

Ուստի եղանակավորման տակ կհասկանանք հաղորդակցական-իմաստաբանական կարգ, որն արտահայտում է հեղինակի՝ սուբյեկտիվ, բայց օբյեկտիվ փաստերի վրա հիմնված վերաբերմունքն իր հաղորդման նկատմամբ, որը և առավելագույնս արտացոլված է անեկդոտի ժանրի տեքստերում: Սակայն հարկ ենք համարում ավելացնել, որ անեկդոտի տեքստում տվյալ ազգի կամ ժողովրդի միայն հեզմական կամ քննադատական վերաբերմունքը չէ, որ կարելի է տեսնել: Ծաղրից, հեզմանքից, քննադատությունից բացի այստեղ հստակ արտահայտված է թե՛ պատմողի և թե՛ տվյալ ազգի լավատեսությունը, որն ինքնին արդեն իսկ դրական վերաբերմունքի նախանշան է:

Ընդհանրապես կոմիկականում ծիծաղով արտահայտվում է ժողովրդական ոգու պատմական լավատեսությունը: Կատակերգական ժանրի խորքերում ապրում է մշտական ծգտումը՝ անջատել ճշմարտության «կոնկրետ տմտեսականը» «համաշխարհային պատմական իմաստից»: Այսպիսի դիրքորոշումը հանրակնում է Կ. Մարքսի այն խոսքերի հետ, որ կոմիկականն օգնում է մարդկությանը ծիծաղելով բաժանվել իր անցյալից [7, 32]:

Այսպիսով, վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ անեկդոտի տեքստում միանգամայն հստակ դրսևորում ունի եղանակավորման տեքստային կարգը, որն այստեղ բնութագրվում է դրսևորման իր ուրույն միջոցներով /չափազանցություն, հեզմանք, ծայնարկություն, հնչերանգ/: Եվ կապված անեկդոտի բանահյուսական ժանրային պատկանելության հետ՝ անեկդոտի տեքստում եղանակավորման կարգը ստանում է առանձնահատուկ դեր և նշանակություն, քանի որ արտահայտում է ոչ միայն մեկ անհատ հեղինակի կամ պատ-

մողի վերաբերմունքը և դիրքորոշումը, այլև մի ողջ ժողովրդի ու ազգի մոտ տարիների ընթացքում ձևավորված միանգամայն օբյեկտիվ վերաբերմունքը իրականության տարբեր երևույթների նկատմամբ: Նշենք նաև, որ անեկդոտի ժանրում նկատվում է եղանակավորման կարգի միանգամայն յուրահատուկ դրսևորում, այն է՝ մի կողմից բացասականի քննադատություն, բացահայտ հեգնանք և ծաղր, մյուս կողմից՝ իրականության նկատմամբ ոչ մի ժխտողական վերաբերմունք, ոչ մի մերժողական գնահատական կյանքի թեկուզ և բացասական երևույթների վերաբերյալ: Այսինքն՝ անեկդոտում, թեպետ և ներակայորեն, սակայն միանգամայն հստակ ասվում է՝ այն, ինչ ունենք և այն, ինչ տեսնում ենք մեր շուրջը, չնայած անընդունելի են ու անցանկալի և արժանի են բարեփոխման ու բարելավման, չպետք է գնահատենք որպես ողբերգություն, «անբուժելի հիվանդություն»: Ընդհակառակը, կյանքում ամեն ինչին պետք է մոտենալ մի փոքր հումորով և լավատեսորեն ու կոմիկական ենթատեքստ տեսնել կամ առնվազն փնտրել ցանկացած իրավիճակում:

Գրականության ցանկ

1. Գաբրիելյան Վ.Վ. Եղանակավորությունը և եղանակը հայերեն և անգլերեն լեզուներում: Մեղմագիր բան. գիտ. թեկն./ Եր., 1994. - 21 էջ:
2. Каган М. С. Анекдот как феномен культуры. /Материалы круглого стола 16 ноября 2002г./ СПб., 2002. - С. 5-16.
3. Категории текста. /ред. Т. М. Баталова/ М., 1984. -256 с.
4. Курганов Е. Анекдот как жанр. СПб, 1997. - 124 с.
5. Ройфе А.Б. Анекдот и фантастика. Анекдот как феномен культуры. /Материалы круглого стола 16 ноября, 2002г./ СПб: Санкт-Петербургское философское общество, 2002. С. 103-109.
6. Русский юмор. /ред. Б. Бегак/ Лит.-Эстрад. сб. М.- Л.: "Искусство", 1940. - 234 с.
7. Смирнов Б. А. Текст как вид искусства. Л., 1977. - 74 с.
8. Сорокина В.Н. Кинематографический анекдот. Анекдот как феномен культуры. /Материалы круглого стола 16 ноября, 2002г./ СПб.: Санкт-Петербургское философское общество, 2002. - С. 129-131.
9. Химик В.В. Анекдот как уникальное явление русской речевой культуры /Анекдот как феномен культуры. Материалы круглого стола 16 ноября 2002г./ СПб., 2002. - С. 17-31.
10. Шишков С.М. Абсурдный анекдот в культуре. /Материалы круглого стола 16 ноября 2002г./ СПб., 2002. - С. 139-147.
11. Шмелева Е.Я., Шмелев А.Д. Русский анекдот. Текст и речевой жанр. М., 2002. - 143 с.
12. Pocheptsov G.G. A Collection of Linguistically Based Jokes, Stories, etc. Kiev, 1981. - P. 307-325.
13. The Art of Mark Twain /William M. Gibson/ N. Y.: "Oxford, University Press", 1976. - 230p.
14. The New Encyclopedia Britanica, Chicago, 1768. 982 p
15. Tarasova S., Another Glance at Minor Prose. [ONLINE], Retrieved April 2006. Web site: <http://www.su.samara.ru/vestnik/gum/>